ՀԱՅԱՍՏԱՆ

Աղյուսակ 1	2022
Բնակչություն, միլիոն	2.8
ՀՆԱ, ընթացիկ մլրդ. ԱՄՆ դոլար	19.5
Մեկ շնչի հաշվով ՀՆԱ, ընթացիկ ԱՄՆ դոլար	7014.2
Աղքատության միջին մակարդակ (1.9 դոլար)ա	0.5
Ցածր շեմի միջին եկամտով երկրների աղքատության մակարդակ (3.2 դոլար)ա	8.7
Բարձր շեմի միջին եկամտով երկրների աղքատության մակարդակ (5 դոլար)ա	51.7
Ձինի գործակից	27.9
Տարրական դպրոցներում ընդգրկվածություն (% համախառն)բ	91.1
Կյանքի սպասվող տևողությունը ծննդից, տարիբ	72.2
Ջերմոցային գազերի ընդհանուր արտանետումներ (մտCO2համ.)	13.5

Աղբյուրը՝ ՀԶՑ, Մակրո աղքատության հեռանկարը և պաշտոնական տվյալները :
ա/ Վերջին արժեքը
(2021), 2017 գնողունակության համարժեքով
բ/ ՀԶՑ դպրոցներում ընդգրկվածության համար (2021), Կյանքի սպասվող տևողությունը (2020)

2022 թվականին տնտեսական աճը կազմել է 12.6 տոկոս՝ շատ ավելի բարձր, քան սկզբում էր ակնկալվում, հիմնականում Ռուսաստանից միգրանտների և կապիտալի ներհոսքերի հաշվին ծառայությունների և մասնավոր սպառման նշանակալի աճի շնորհիվ: Հեռանկարը զգալի անորոշության է հակված՝ ներհոսքերի ուղղությունը փոխելու ռիսկով, աշխարհաքաղաքական շարունակվող լարվածություններով և Հայաստանի սահմանին չլուծված հարցերով պայմանավորված:

Հիմնական պայմաններ և մարտահրավերներ

2022 թ. Հայաստանը միգրանտների, բիզնեսների և կապիտալի զգալի ներհոսք է կլանել՝ Ուկրաինա Ռուսաստանի ներխուժումից հետո: Երկրի համար շահեկան էր նաև առևտրի և ֆինանսական որոշ հոսքերի երթուղու փոփոխությունը՝ Հայաստանի տարածքով: Նշված զարգացումները խթանել են ներքին պահանջարկը և նպաստել արժույթի արժևորմանը. դրանց հաշվին պահուստների մակարդակն ավելացել է, վարկերի դոլարացումը՝ նվազել: Հայաստանի մակրոտնտեսական առողջ քաղաքականությունը (գնաճի ակտիվ նպատակադրումը, հավատարմությունը հարկաբյուջետային շրջահայաց քաղաքականությանը հավատարմությունը և ֆինանսական հատվածի հուսալի վերահսկողությունը) վերջին մի քանի տարիներին օժանդակել են ընդհանուր առմամբ դրական տնտեսական արդյունքներին՝ չնայած նշանակալի ցնցումներին: Հայաստանը նաև հետամուտ է եղել զգալի բարեփոխումների, մասնավորապես՝ ուղղված կոռուպցիայի նվազեցմանը և հրապարակայնության ավելացմանը: Սակայն կառուցվածքային նշանակալի մարտահրավերները պահպանվում են, որոնք հանգեցնում են թույլ արտադրողականության, ցածր ներդրումների և ՕՈՒՆ ներգրավելու անկարողության, սահմանափակ մարդկային կապիտալի, չբազմազանեցված տնտեսական կառուցվածքի և նեղ արտահանման բազայի ու արտահանման ուղղությունների:

Վերջին զարգացումները

2022 թվականի տնտեսական արդյունքներն անսպասելիորեն բարձր էին, ընդ որում իրական ՀՆԱ-ի աճը հասավ 12.6 տոկոսի: Ծառայությունների բարձր աճը (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 17.7 տոկոսի աճ) նպաստեց ընդհանուր աճի մոտավորապես երեքքառորդին: Այն հիմնականում պայմանավորված էր ֆինանսների, SS, տրանսպորտի, կացության, և հանրային սննդի ենթաոլորտներով: Արդյունաբերությունն ու շինարարությունը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են համապատասխանաբար 6 և 19 տոկոսով: Թեև հանքարդյունաբերության ծավալներն իրական արտահայտությամբ կրճատվել են 3.2 տոկոսով (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, (ՆՏՆԺՀ)), ոչ թանկարժեք մետաղներից պատրաստված արտադրանքի 16 տոկոսանոց աճ է գրանցվել (ՆՏՆԺՀնախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ): Գյուղատնտեսության ծավալները կրճատվել են 0.7 տոկոսով (ՆՏՆԺՀնախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ)՝ արտացոլելով ոլորտի մարտահրավերները և փաստացի տվյալների հավաքման հնարավոր սահմանափակումները: Պահանջարկի մասով՝ աճը հիմնականում պայմանավորված է եղել մասնավոր հատվածի սպառմամբ (աճել է 8.1 տոկոսով՝ ՆՏՆԺՀնախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ)՝ Ռուսաստանից մարդկանց և դրամական միջոցների բացառիկ բարձր ներհոսքի և իրական աշխատավարձերի 10 տոկոսանոց աճի հաշվին, որի շարժիչը SS և ֆինանսների ոլորտներում աշխատավարձերի բարձր աճն էր: Գործազրկության մակարդակը 2022 թվականի 3-րդ եռամսյակում իջավ՝ 2021 թվականի վերջի 15.5 տոկոսից կազմելով 11.6 տոկոս և դրանով պայմանավորված 2022 թվականին աղքատության զգալի նվազում է սպասվում: 2022 թվականին գնաճը միջինը կազմել է 8.6 տոկոս՝ 2021 թվականի 7.2 տոկոսի համեմատ: 2022 թվականի կեսին գնաճը բարձրակետից՝ 10.3 տոկոսից (ՆՏՆԺՀնախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ), 2023 թվականի հունվարին նվազեց մինչև 8.1 տոկոս (ՆՏՆԺՀնախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ), երբ 2022 թվականին ՀՀ կենտրոնական բանկը (ՀՀ ԿԲ) վերաֆինանսավորման տոկոսադրույքը 300 բազիսային կետով բարձրացրեցբարձրացրեց, իսկ սննդամթերքի և էներգակիրների միջազգային գները վերջին ամիսներին նվազեցին: ՀՀ դրամի աննախադեպ արժևորումն օգնել է նաև գնաճային ճնշումների զսպմանը: 2022 թվականին հարկաբյուջետային արդյունքները բարձր էին՝ ընդ որում բյուջեի պակասուրդը 2021 թվականի ՀՆԱ-ի 4.6 տոկոսից 2022 թվականին նվազեց մինչև ՀՆԱ-ի 2.2 տոկոսը՝ եկամուտների հավաքման բարձր MPO 1 Apr 23 ցուցանիշի շնորհիվ: Հարկային եկամուտներն անվանական արտահայտությամբ աճեցին 21 տոկոսով (ՆՏՆԺՀնախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ)՝ հիմնականում ԱԱՀ-ի և եկամտային ու շահութահարկի հավաքագրման աճի հաշվին: Թեև ընթացիկ ծախսերն աճեցին սոսկ 4 տոկոսով, կապիտալ ծախսերն ավելացան 193 տոկոսով (ՆՏՆԺՀ)՝

կազմելով ՀՆԱ-ի 4.6 տոկոսը, որը վերջին տասնամյակի ամենաբարձր մակարդակն էր: ՍԱ մասամբ պայմանավորված էր պաշտպանական ավելի բարձր ծախսերով: Տնտեսական և հարկաբյուջետային բարձր արդյունքներով և ՀՀ դրամի արժևորմամբ պայմանավորված՝ 2022 թվականին ՀՆԱ-ի նկատմամբ կառավարության պարտքը կտրուկ՝ 13.6 տոկոսային կետով նվազեց, 2022 թվականի վերջին պարտք-ՀՆԱ հարաբերակցությունը հասցնելով 46.7 տոկոսի: 2022 թվականին արտաքին հաշվեկշիռը նշանակալիորեն բարելավվեց, ընդ որում ապրանքների և ծառայությունների արտահանման աճն աննախադեպ էր: 2022 թվականին ապրանքների արտահանումն անվանական արտահայտությամբ աճեց 77.7 տոկոսով, երբ մեքենաների և գործիքների, տրանսպորտային միջոցների և թանկարժեք քարերի արտահանումը, մասամբ դեպի Ռուսաստան վերաարտահանմամբ պայմանավորված, շեշտակի ավելացավ: Իր հերթին ապրանքների ներմուծումը 2022 թվականին ավելացավ 63.5 տոկոսով: Թե՛ զբոսաշրջությանն առնչվող ծառայություններից, թե՛ դրամական փոխանցումներից մուտքերը 2022 թվականին եռապատկվեցին (ՆՏՆԺՀ)՝ հիմնականում Ռուսաստանից ներհոսքերի զգալի ավելացման հաշվին: ՕՈՒՆ-ն ավելի քան կրկնապատկվեց՝ հիմնականում պայմանավորված ֆինանսական հատվածում ներդրումներով և իրական հատվածում ռուսական ներդրումներով (մասնավորապես՝ հանքարդյունաբերության, էներգետիկայի և անշարժ գույքի ոլորտում): 2023 թվականի հունվարի վերջին միջազգային պահուստները հասան պատմականորեն բարձր՝ 3.7 միլիարդ դոլար մակարդակի կամ ներմուծման 4.4 ամսվա ծածկույթի: Ֆինանսական բարձր ներհոսքերի և գազի ներմուծման դիմաց վճարումները կատարման համար ռուբլու անցնելու հետևանքով ՀՀ դրամը նշանակալիորեն ուժեղացավ, ընդ որում 2022 թվականին ԱՄՆ դոլարի նկատմամբ միջին փոխարժեքն անվանական արտահայտությամբ արժևորվեց 14 տոկոսով, իսկ իրական արդյունավետ արտահայտությամբ՝ 34 տոկոսով (ՆՏՆԺՀ):

Հեռանկարը

2023 թվականին սպասվում է, որ աճը կթուլանա մինչև շուրջ 4.5 տոկոս՝ պայմանավորված 2022 թվականի բարձր բազայով և առևտրային գործընկերների շրջանում աճի տեմպի դանդաղմամբ: Միջնաժամկետ հեռանկարում որոշակի բարձրացմանը կնպաստեն սպառումն ու ավելի բարձր մասնավոր ներդրումները: Արտադրական կողմից սպասվում է, որ ծառայությունները կշարունակեն աճի հիմնական շարժիչը լինել, որին կհաջորդի արդյունաբերությունը: Կանխատեսվում է, որ գնաճն աստիճանաբար կնվազի՝ 2025 թվականին հասնելով իր 4 տոկոս թիրախային մակարդակին: Կառավարության միջնաժամկետ ծախսերի ծրագրին համահունչ ակնկալվում է բյուջեի պակասուրդի նվազում՝ 2023 թվականին ծրագրված 3.1 տոկոսից մինչև 2.5 տոկոս 2025 թվականին: 2022 թվականի կտրուկ բարելավումից հետո, 2023 թվականին ընթացիկ հաշվի պակասուրդի վատթարացում և միջնաժամկետ հեռանկարում ՀՆԱ-ի 3 տոկոսի շուրջը կայունացում է կանխատեսվում:

Մակրոտնտեսական կանխատեսումներից հետևում է, որ բարձր շեմի միջին եկամտով երկրների աղքատության գիծը (օրական 6.85 ԱՄՆ դոլար, 2017 գնողունակության համարժեքով) չհատող բնակչությունը, 2021 թվականի 51.7 տոկոսից 2022 թվականին նվազելով մինչև 41.8 տոկոս, 2023 թվականին կհասնի 38.4 տոկոս: Սակայն բարձր գնաճը, մասնավորապես՝ սննդամթերքի և անշարժ գույքի վրա ազդելով, կարող է բացասաբար անդրադառնալ ամենաաղքատ տնային տնտեսությունների վրա:

Ներհոսքերի ուղղության փոփոխությունը, գնաճի և զարգացած տնտեսությունների դրամավարկային պայմանների հետագա խստացմանը զուգընթաց, արժույթը ճնշման տակ կհայտնվի՝ հաշվեշռի վրա հնարավոր ճնշումներ և վերաֆինանսավորման մարտահրավերներ առաջացնելով: Ռուսաստանի հիմնական առևտրային գործընկերների վրա պատժամիջոցների տարածումը, ինչպես նաև աշխարհաքաղաքական ճշնումները նվազման ուղղությամբ ռիսկերի մյուս աղբյուրն են: Դրական կողմն այն է, որ Ռուսաստանից ավելի ուժեղ ներհոսքերի հաշվին աճը կարող է կանխատեսվածից բարձր լինել:

ՊԱՏԿԵՐ 1 **Հայաստան** / Իրական ՀՆԱ-ի աճը և նպաստումն իրական ՀՆԱ-ի աճին



Աղբյուրները՝ ՀՀ վիճակագրական կոմիտե և Համաշխարհային բանկի աշխատակիցների կանխատեսումներ:

ՊԱՏԿԵՐ 2 **ՀԱՅԱՍՏԱՆ** / Աղքատության փաստացի և կանխատեսվող մակարդակը և մեկ շնչի հաշվով իրական ՀՆԱ-ն



Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ: Ծանոթ. տե՛ս Աղյուսակ 2-ը:

ԱՂՅՈՒՍԱԿ 2 **Հայաստան** / Մակրո աղքատության հեռանկարի ցուցանիշները (տարեկան տոկոսային փոփոխությունը, եթե այլ բան նշված չէ)

	2020	2021	2022գ	2023կ	2024կ	2025կ
Իրական ՀՆԱ-ի աճը՝ հաստատուն շուկայական գներով	-7.2	5.7	12.6	4.4	4.8	5.0
Մասնավոր սպառում	-13.9	3.7	8.1	4.2	4.9	4.4
Պետական սպառում	9.2	8.4	6.5	1.3	4.3	6.2
Հիմնական միջոցների համախառն կուտակում	-1.5	6.3	9.5	11.4	7.3	6.7
Արտահանում, ապրանքներ և ծառայություններ	-33.5	16.6	54.4	9.8	9.2	8.5
Ներմուծում, ապրանքներ և ծառայություններ	-31.5	12.9	33.8	10.5	9.5	8.1
Իրական ՀՆԱ-ի աճը՝ հաստատուն գործոնային գներով	-6.8	5.5	13.2	4.4	4.8	5.0
Գյուղատնտեսություն	-3.7	-0.6	-0.7	1.2	2.0	2.7
Արդյունաբերություն	-2.5	3.4	9.4	4.9	4.2	3.9
Ծառայություններ	-9.6	8.0	18.1	4.7	5.5	5.9
Գնաճ (սպառողական գների ինդեքս)	1.2	7.2	8.6	6.5	4.5	4.0
Ընթացիկ հաշվի հաշվեկշիռ (ՀՆԱ-ի %)	-3.8	-3.7	-0.4	-2.2	-2.7	-3.0
Զուտ օտարերկրյա ուղղակի ներդրումների ներհոսք (ՀՆԱ-ի %)	0.7	2.5	4.1	2.1	2.2	2.5
Հարկաբյուջետային հաշվեկշիռ (ՀՆԱ-ի %)	-5.1	-4.6	-2.2	-3.1	-2.8	-2.5
Եկամուտներ (ՀՆԱ-ի %)	26.0	25.0	25.1	25.0	25.2	25.6
Պարտք (ՀՆԱ-ի %)[ա]	63.5	60.3	46.7	49.2	48.6	48.0
Առաջնային հաշվեկշիռ (ՀՆԱ-ի %)	-2.4	-2.0	0.2	-0.2	0.2	0.4
Աղքատության միջազգային մակարդակ (2.15 դոլար 2017 թ. գնողունակության համարժեքով)[բգ]	0.4	0.5	0.3	0.3	0.2	0.2
Ցածր շեմի միջին եկամտով երկրների աղքատության մակարդակ (3.65 դոլար 2017 թ. գնողունակության համարժեքով)[բգ]	6.7	8.7	5.6	4.5	3.8	3.1
Բարձր շեմի միջին եկամտով երկրների աղքատության մակարդակ (6.85 դոլար 2017 թ. գնողունակության համարժեքով)[բգ]	53.2	51.7	41.8	38.4	35.0	31.4
Ջերմոցային գազերի արտանետումների աճ (մտCO2համ.)	-1.8	15.4	19.5	7.1	8.3	9.7
Էներգակիրների հետ կապված ջերմոցային գազերի արտանետումներ (ընդհանուրի %)	60.3	66.5	72.4	74.5	76.6	78.7

Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի աղքատության և հավասարության ու մակրոէկոնոմիկայի, առևտրի և ներդրումների գլոբալ պրակտիկաներ. Արտանետման տվյալների աղբյուրները CAIT-ը և ՏՀԶԿ-ն են:

Ծանոթ. գ = գնահատական, կ = կանխատեսում: